XV-1. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ և ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Սույն սակագները գործում են ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից վճարումների դեպքերի, որոնք կարող են իրականացվել նաև ազատ փոխարկելի արտարժույթով (ԱՄՆ դոլար, Եվրո ՌԴ ռուբլի): Արտարժույթով վճարման դեպքում ՀՀ դրամով արտահայտված գումարները վերահաշվարկվում են համապատասխան արտարժույթի՝ հաշիվը դուրս գրելու օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով: Սույն սակագները գանձվում են Բանկի կողմից ծառայությունը մատուցելու պահին, սակայն ոչ ուշ, քան ծառայության մատուցման օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրը, բացառությամբ այն սակագների, որոնց գանձումը նախատեսվում է կատարել ամսական կտրվածքով: Ամսական կտրվածքով սահմանված սակագների գանձումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը: Ռեեստրի վարման ծառայության մատուցման առաջին և վերջին ամսվա միջնորդավճարները գանձվում են ամսվա փաստացի օրերի հաշվարկով:

1.2.Եթե ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան տոկոսը:

1.3.Սույն սակագները ներառում են ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), բացառությամբ սակագներով սահմանված 2 <<Բաժնետոմսերի (փայերի) ռեեստրի վարում և պահպանում>>, 3 <<Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)>>, 18 <<Սեփականատերերի արժեթղթերի հաշիվներում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանման հետ կապված ծառայություններ>>, 23.1 <<Հաշվի օպերատոր չհանդիսացող անձի համար<<Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի պահպանում>>>>, 23.2<<Հաշվի օպերատոր հանդիսացող անձի համար<<Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի պահպանում>>>> և 24 <<Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման և այդ արժեթղթերով գործարքների սպասարկման ծառայություններ. <<Արժեթղթերի պահպանման ծառայություն>>>> կետերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ ազատված են ԱԱՀ-ից:

1.4.Սահմանված ժամկետներում չվճարվելու դեպքում Սակագները անակցեպտ կարգով գանձվում են Բանկում հաճախորդի հաշիվներից: ՀՀ դրամով հաշիվներին բավարար միջոցներ չլինելու դեպքում, Բանկն իրավունք ունի համապատասխան գումարը կամ դրամի մասը փոխարկել հաճախորդի արտարժույթով հաշիվներում առկա միջոցներից՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առքի փոխարժեքը:

1.5.Թողարկողի կողմից սույն սակագներով սահմանված ժամկետներում նախատեսված վճարները երեք ամիս անընդմեջ չկատարման, ուշացման կամ մասամբ կատարման դեպքում Բանկը տվյալ վճարման պարտավորությունը չկատարողի կամ ոչ պատշաճ կատարողի նկատմամբ հաշվարկում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0.2%-ի չափով:

1.6.Բանկն իրավունք ունի կասեցնել սույն կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումն իր միջնորդությամբ ռեեստրի վարման և պահառության/ենթապահառության պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող թողարկողներին և հաշվետերերին, եթե վերջիններս Բանկի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց երեք ամսից ավել վճարման ենթակա միջնորդավճարներ:

1.7. Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Բանկն իրավունք ունի վերսկսել թողարկողին և հաշվետիրոջը ծառայությունների մատուցումն, այդ թվում վերակնքել ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս այն չվերակնքած թողարկողների հետ հետևյալ դեպքերում.

հաշվարկված վճարման ենթական գումարը (Գ1) ամբողջովին Կենտրոնական դեպոզիտարիային անմիջականորեն կամ Բանկի միջնորդությամբ վճարելուց հետո, որտեղ՝ԺՊ - կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար, ՊՎվ– պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է ՀԴ*Օ/365, որտեղ Օ - կասեցման օրերի քանակն է, ՀԴ - հիմնական դրույքաչափն է, որը կազմում է.
ա. 96,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 1-ից մինչև 99,
բ. 192,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 100-ից մինչև 499,
գ.360,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 500 և ավելի:
Ընդ որում՝ ռեեստրում վարման պայմանագիրը Հաշվի օպերատորի միջնորդությամբ դեռևս չվերակնքած թողարկողների նկատմամբ հաշվարկվող ՊՎՎ-ի առավելագույն գումարը չի կարող գերազանցել սույն ենթակետի ա. մասում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 180,000 ՀՀ դրամը, բ. մասում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 360,000 ՀՀ դրամը, գ. մասում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 660,000 ՀՀ դրամը,
1.7.2Եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է, ապա Գ2=ԺՊ+ՊՎՎ բանաձևով հաշվարկված վճարման ենթակա գումարը (Գ2) ամբողջովին Բանկին վճարելուց հետո, որտեղ՝ԺՊ - կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար, ՊՎվ– պայմանագրի վերսկսման վճար,որը հաշվարկվում է ՀԴ*Օ/365, որտեղ Օ - կասեցման օրերի քանակն է, ՀԴ - հիմնական դրույքաչափն է, որը կազմում է
ա. 120,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 1-ից մինչև 99,
բ. 240,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 100-ից մինչև 499,
գ. 420,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 500 և ավելի:

1.7.3Եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է, ապա Գ3=ԺՊ+ՊՎՎ բանաձևով (Գ3) հաշվարկված վճարման ենթական գումարը ամբողջովին Բանկին վճարելուց հետո, որտեղ՝Պվվ–ն պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ ՀԴxՕ/365, ընդ որում՝ ՀԴ -ն հիմնական դրույքաչափն է, որը կազմում է վերսկսման պահին հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.0108 %-ը, Օ - կասեցման օրերի քանակն է, ԺՊ -ն՝ կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար:
1.7.1.-1.7.3. ենթակետերով վճարման ենթակա գումարի մասնակի վճարման դեպքում առաջին հերթին մարման են ենթակա ժամկետանց պարտավորությունների գումարը (ԺՊ), այնուհետ՝ պայմանգրի վերսկսման վճարը (ՊՎՎ):

1.8.Ծառայությունների մատուցման սույն պայմանների 1.7 կետով նախատեսված կարգով կասեցման ժամանակահատվածում թողարկողի կամ հաշվետիրոջ կողմից օրենքով սահմանված դեպքերում պայմանագիրը լուծելու դեպքում.

1.8.1.թողարկողը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը Բանկին վճարել 1.7.2 կետի համաձայն հաշվարկված գումարը և մարել Բանկի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է.

1.8.2. Հաշվետերը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը Բանկին վճարել 1.7.3-ի համաձայն հաշվարկված գումարը և մարել Բանկի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է:

1.9. Սույն սակագների 19.1 կետով սահմանված ծառայությունների համար Կենտրոնական Դեպոզիտարիայի և Բանկի աշխատակարգով սահմանված դեպքերում տվյալ աշխատանքային օրվա ընթացքում արժեթղթերի փոխանցման նպատակով նոր՝ ճշգրտված համապատասխան հանձնարարականների ներկայացման դեպքում լրացուցիչ գումար չի գանձվում:

1.10. Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայություններից օգտվող թողարկողները Կենտրոնական դեպոզիտարիայի հանդեպ ունեցած իրենց պարտավորությունների մասին կարող են տեղեկանալ Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետ կայքից:

1.11.Հիմք ընդունելով Բանկի և հաճախորդի միջև երկարատև համագործակցությունը՝ առանձին հաճախորդների համար տնօրինության որոշմամբ կարող են սահմանվել սույն սակագներից տարբերվող սակագներ, ընդ որում՝ նման սակագների սահմանման դեպքում տնօրինության որոշմամբ պետք է սահմանվեն այդ սակագների սահմանման չափանիշները, որոնք կիրառելի կլինեն հաճախորդների տվյալ խմբի նկատմամբ:

1.12.Բանկը կարող է գործող Սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի ինտերնետային կայքում (Բանկի տարածքում) հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից դրանք Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնելու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից չառարկելու դեպքում:Հաճախորդի կողմից վճարման ենթակա գումարը ներառում է Կենտրոնական Դեպոզիտարիայի սակագինը և Բանկի միջնորդավճարը: